



ՈՐՈՇ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ (Մաս III. Տեղաշարժումը մարտադաշտում և աշխատանք «գույգով»)

Հաշվի առնելով տեղանքի բնույթը, իրադրության պայմաններն ու հակառակորդի կրակային գործողությունները, մարտադաշտում մարտիկը կարող է տեղաշարժվել՝ քայլքով (վազքով), վազելազք և սողանցելով:

1. Հակառակորդի դիտարկման և կրակի համար անհասանելի տեղանքի հատվածները հաղթահարվում են *արագացված քայլքով կամ վազքով* (ամբողջ հասակով կամ կռացած): Կռացած քայլքը օգտագործվում է ոչ բարձր ծածկվածություն ունեցող (ցածր թփեր, բարձր խոտ, խրամուղի և այլն) տարածքներում՝ ծածուկ շարժման համար: Դուք պետք է ծալեք ձեր ծնկները, մարմինը ուղղեք դեպի առաջ, նայեք առաջ և շարժվեք փոքր քայլքերով: Բոլոր շարժումները կատարվում են ազատ, առանց լարվածության:

2. *Վազելազքը* կիրառվում է բաց տարածքներում հակառակորդին արագ մոտենալու համար: Վազքի երկարությունը կախված է ռելիեֆից և հակառակորդի կրակային ինտենսիվությունից ու պետք է լինի միջինը 20-40 քայլ: Որքան բաց է տարածքը և ինտենսիվ է կրակը, այնքան կարճ պետք է լինի վազելազքը:

3. *Սողանցումը* կիրառվում է հակառակորդին աննկատ մոտենալու և տեղանքի այն հատվածները գաղտնի հաղթահարելու համար, որոնք ունեն աննշան ծածկվածություն, ռելիեֆի անհարթություններ և գտնվում են հակառակորդի դիտարկման կամ գնդակոծության տակ:

Կախված իրավիճակից, տեղանքից և հակառակորդի կրակի ինտենսիվությունից՝ մարտիկը կարող է սողանցել:

* *պլաստունյան տարբերակով*, դրա համար հարկավոր է պառկել գետնին, աջ ձեռքով զենքը վերցրել վերին փոկակալից և դնել այն աջ ձեռքի նախաբազկի վրա,

որից հետո բարձրացնել աջ (կամ ձախ) ոտքը և միևնույն ժամանակ առաջ մղել ձախ (աջ) ձեռքը որքան հնարավոր է հեռու: Հրելով ձեր թեքված ոտքը, առաջ շարժվեք, քաշեք մյուս ոտքը, առաջ քաշեք մյուս ձեռքը և շարունակեք շարժվել նույն կերպ՝ զենքը ձեր կողքին պահելով:



Տեղաշարժումը սողանցումով

** կիսաչորեքթաթ տարբերակ:* Ծնկի իջեք և, հենվելով նախաբազուկների կամ ձեռքերի վրա, բարձրացրեք ծալված աջ (ձախ) ոտքը դեպի կրծքավանդակ, միաժամանակ ձախ (աջ) ձեռքը առաջ մղեք: Մարմինը առաջ մղեք մինչև աջ (ձախ) ոտքի ամբողջական ուղղումը, միաժամանակ քաշելով երկրորդ ծալված ոտքը, իսկ մյուս ձեռքը առաջ մղելով, շարունակեք շարժվել: Զենքը պահեք մի ձեռքով, խզակոթը թևատակում՝ ձեռքով սեղմված:




Տեղաշարժումը կիսաչորեքթաթ

Կուլեկտիվում մարտական աշխատանքներն իրականացվում են փոքր խմբերով՝ որպես «գույգի» կամ «եռյակի» մաս, հետևաբար, հիմնական կանոնն այն է, որ կարողանաք տեղաշարժվել (մոտեցում, նահանջ և այլն), միայն էապես դժվարաց-

ներլով հակառակորդի կողմից կրակի վարումը՝ անարդյունավետ դարձնելով կամ ամբողջությամբ բացառելով այն: Մարտական «եռյակի» կազմում երկուսը կրակում են, մեկը վազում (սողում), և առանց խիստ հետևողականության, ով ումից հետո է վեր ցատկում և փոխում դիրքը: Հակառակորդը չպետք է հնարավորություն ունենա կանխատեսելու, թե «եռյակի» անդամներից ով է տեղաշարժվելու հաջորդը: Առաջ նետում (վազք) կատարելիս մարտիկը պետք է հաշվարկի (ես վեր կացա, նա տեսավ ինձ, նշանառեց, ես ընկա), ըստ այդմ, բաց տարածքում վազքի տևողությունը չպետք է գերազանցի 3 վայրկյանը: Ընկնելուց հետո, հնարավորության դեպքում, պետք է սողալ մարմնի երկու կորպուսի չափով՝ ձախ կամ աջ, ապա պետք է նշանառել և կրակ բացել հակառակորդի ուղղությամբ՝ ձայն տալով զուգընկերոջը՝ «պահում եմ», որպեսզի «եռյակի» հաջորդ մարտիկը կարողանա սկսել շարժումը:

Աշխատանք «գույգով»

Զույգով շարժման կարգն իրականացվում է «մեկ ոտքը գետնին» սկզբունքով, երբ գետնին գտնվող մի մարտիկը (ստորին հարթությունում՝ պատկած կամ նստած) կրակում է հակառակորդի ուղղությամբ, իսկ երկրորդը՝ այդ պահին կատարում է տեղաշարժ (վազում կամ սողում է): Հարկ է միայն նշել, որ «գույգով» աշխատելիս մարտիկը, ով կրակ է վարում, պետք է ձայն տա «պահում եմ»՝ ցույց տալու իր պատրաստակամությունը, որ կրակով պաշտպանում է իր գործընկերոջ տեղաշարժը: Դա պետք է արվի, քանի որ տեսողական կապը միշտ չէ, որ կարող է պահպանվել նույնիսկ «գույգի» ներսում, և մարտական որոտի ժամանակ միշտ չէ, որ հնարավոր է տարբերել զուգընկերն է կրակակում, թե մեկ այլ զինվոր:



Տարածված սխալներից է այն, որ տեղաշարժն ավարտելուց անմիջապես հետո զուգընկերոջը հաղորդում ես, որ դու պատրաստ ես նրան պաշտպանել, բայց ինքդ դեռ չես հասցրել կրակային դիրք զբաղեցնել: Արդյունքում, գործընկերը դադարում է կրակել մինչև «գույգի» երկրորդ անդամը կսկսի կրակել, քանի որ որոշակի ժամանակ է պահանջվում հարմարավետ կրակային դիրք զբաղեցնելու համար: Այս սխալի դեմ պայքարելու համար հարկավոր է կիրառել հետևյալ հնարքը. մարտիկը նախ պետք է

մենահատ կրակոց (կրակահեթ) արձակի և միայն դրանից հետո իր գործընկերոջը տեղեկացնի պաշտպանվածությունը կրակով ապահովելու իր պատրաստակամության մասին: Այսինքն՝ տեղաշարժը բաժանվում է փուլերի՝ մեկ մարտիկով կրակելու փուլը փոխարինվում է երկու մարտիկների կողմից կրակելու փուլով:

Տեղաշարժը սկսելուց առաջ անհրաժեշտ է ուշադիր նայել, ուսումնասիրել տեղանքը 25-50 մ հեռավորության վրա և որոշել ձեր առաջարժման ուղին՝ պարտադիր հաշվի առնելով հակառակորդի կրակից պաշտպանվելու հնարավորությունը:

Ուղղությունը ընտրելիս մարտիկը պետք է բացառի այն տարբերակները, որոնք կհատեն իր ընկերների կրակի վարման գծերը:

Հարձակումն սկսելիս ստորաբաժանման հրամանատարը մարտիկներին է հասցնում հիմնական կողմնորոշիչները, ինչը թույլ է տալիս արդյունավետորեն դեկավարել մարտը և կարգավորել կրակը: Հետևաբար, յուրաքանչյուր մարտիկ, երբ տեղաշարժվում է մարտադաշտում, պետք է իմանա նշանակված կողմնորոշիչները և տեղաշարժվի տարածությունում տվյալ կողմնորոշիչներով: Բացի այդ, մարտադաշտում յուրաքանչյուր մարտիկ պետք է մշտապես դիտարկի տեղանքը, որպեսզի իր զենքից խոցի հակառակորդի իհայտ եկած թիրախները, իսկ դրա անհնարինության դեպքում զեկուցի ջոկի հրամանատարին և կարողանա ճշտգրտել կրակային միջոցների կրակը:

Մարտադաշտում վազելագը տեղաշարժվելիս պետք է խուսափել ուղիղ գծով վազելագրից: Անհրաժեշտ է տեղաշարժվել անկյունագծով դեպի հակառակորդը, որպեսզի հակառակորդը դժվարանա նշանառու կրակել:

